830

891.99
Ն-38

# ՄԱՆԻՇԱԿՔ

ՔԱՂԵԱԼՔ ԱՌ ՍՏՈՐՈՏՈՎ ՀԵՂԻԿՈՆԻ
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ
ՄԻՈՅ ՅԱՇԱԿԵՐՏԱՑՆ ՀՐԱՀԱՆԳԵԼՈՑ

## 'Ի ՀԱՅԿԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ։

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ. ՏՆ. ՅՈՎՀԱՆՆՈՒ՝
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԽԱՉԱՏՐՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՍՐԲՈՅ ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՆԱՑՆ ՋՈՒՂԱՅՈՒ։

'Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ։

Ի ԿԱԼԿԱԹԱ

1841



ԱՌ ԳԵՐԱԶՆԻՒ ՀԱՅՐ ԻՄ՝

## ՊԱՐՈՆ ԳԱԲՐԻԷԼ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ

ԵՒ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՄԱՅՐ ԻՄ՝

## ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ Գ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ՝

'Ի ՌԱՆԳՈՒՆ:

ՈՐԴԵՍԷ՛Ր ԾՆՈՂՔ ԻՄ,

*Ցընթացս ուսումնառութեան իմոյ 'ի Մարդասիրական Ճեմարանին յաւէտ իմն քաղցրացաւ ինձ քաղել զ կարի գքանի մի ծաղկունս առ մշտադալար ստորոտով Հեղիկոնի. զորս և կապեալ 'ի միասին 'ի փնջիկ իմն շնչին՝ նուիրեմ մեծարանօք ծնողացդ իմոց երախտաւորաց և պատուելեաց. այնց՝ զորս 'ի բնուստ սիրել ուսայ, և զոր պատուել ինձ հրամայէ պատգամն աստուածագիր:*

*Հաճեցարուք ուրեմն ընդունել սիրով զայս դուզնաքեայ իմն նուէր որդիական սիրոյ և մեծարանաց, և լերուք 'ի Տէր միշտ երջանիկ և անսասան: Մնամ յարգանօք՝ որդեսէր Ծնողացդ՝*

*Ամենախոնարհ ծառայ՝*

'Ի Մարդասիրական Ճեմարանի,

'Ի ԿԱԼԿԱԹԱ,

*Եւ հնազանդ բոտին որդի՝*

'Ի 11 Յունվարի, 1841:

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԳԱԲՐԻԷԼ ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ:

Բան իմ 'ի վերայ կարօտեալ Հօր իմոյ :

1

Գամ և բերեմ՝ պտուղ ինչ նոր ,
մատուցանել՝ իմ ազնիւ Հօր :

2

Այս է պտուղ՝ իմ առաջին ,
զոր նուիրեմ՝ իմ ծնողին :

3

Բարի օրհնեալ՝ հա՛յր պատուական ,
ընկա՛լ զընծայս՝ որդիական :

4

Րոտին որդիս՝ բարւոյն աենչամ,
և ծնողաց՝ կարօտ մնամ:

5

Ինձ արդ ունիլ՝ է յոյժ արժան ,
զփոյթ , զջա՛ն՝ զօէր ուսման :

6

Ի՛ն վերնական՝ տկար մանկան ,
տացէ շնորհ՝ իմաստութեան :

7

Լաւ է ապա՝ ինձ յարաժամ,
անխոնջ լինել՝ 'ի գիւտ ուսման :

Բան իմն ՚ի վերայ ծնողաց։

1

Օրհնեա՛լ ծնո՛ղքդ՝ իմ պատուելի,
որ վասն մեր՝ կամիք բարի.
Անհո՛գ լերուք՝ զձեր որդւոց,
որք աստ չե՛ն զուրկ ՚ի խնամոց:

2

Օրհնեա՛լ բարի՝ Հայր ցանկալի,
մի՛ մոռանար՝ զքո որդի.
Որ հանապազ՝ յուսայ ՚ի Տէր,
լինել յաւէտ՝ ուսումնասէր:

3

Ծնո՛ղ բարի՝ Մայր սիրական,
որ կրեցեր՝ ցաւ ծննդեան.
Ո՞չ է և ինձ՝ լինել արժան,
քեզ ծառայել՝ սիրոյդ փոխան:

4

Յիշեա՛ յաղօթս՝ զքո որդի,
՚ի տունջեան՝ և ՚ի գիշերի.
Զի աղօթիւքդ՝ եղէց արժան,
իմ ծնողաց՝ գոլ միտեան:

### Բան երգ ՚ի վերայ երէց Եղբօր իմոյ :

1

Երէց եղբայր՝ իմ սիրելի ,
որոյ անունդ՝ ինձ բաղձալի .
Անուն չքնաղ՝ Եղիազար ,
ինձ սփոփանք՝ հոգեպարար :

2

Զի՞ փայլուչ՝ և զի՞ բարի ,
զի սէր լիցի՝ յեղբարց միջի .
Այսպէս ոգէ՝ քնար Դաւթի ,
Թագաւորին՝ խաշնարածի :

3

Բայց զանկն քոյ՝ երգոյս փչման ,
՚ի սէր եղբօրդ՝ լե՛ր անսասան .
Զհարազատ՝ քոյ անպիտան ,
սիրեա՛ սերտիւ՝ դու յաւիտեան :

4

Սէր ՚ի սիրոյ՝ է խոնարհեալ ,
յակամայից՝ ոչ ստիպեալ .
Սէր յարաժամ՝ քո ինձ ցուցեալ ,
խոնարհութիւն՝ յինէն տեսեալ :

Բան երգ 'ի վերայ հրաւէր եղբօր իմոյ :

1

Ո՛վ դու եղբայր՝ իմ տենչալի,
մու զայս խրատ՝ 'ի քո մտի.
Զի այն յօգուտ՝ քոյ եղիցի,
և 'ի սփոփանս՝ մեր ծնողի :

2

Բարի խրատուց՝ լե՛ր հետևող,
բարի անուան՝ լե՛ր փափաքող.
Լաւ ընկերաց՝ լե՛ր դու ընկեր,
բարեաց գործոց՝ լե՛ր պտղաբեր :

3

Ընկերի քում՝ մի՛ սուտ ասեր,
զստութիւն՝ դու մի՛ սիրեր.
Այլ միշտ դու լե՛ր՝ ճշմարտասէր,
նա և անխոնջ՝ ուսումնասէր :

4

Քաղցրիկ եղբայր՝ կմ ցանկալի,
որոյ անուն՝ Սամուէլ կոչի.
Հեռի կաց դու՝ միշտ 'ի չարէ,
և 'ի մարդոյ՝ անիրաւէ :

## Բան ԻԶ ՚ի վերայ ճաշակման Գերոյ :

1

Քո՛րք իմ քաղցրիկ՝ և կաթոգին ,
որք բնակիք՝ ՚ի տար երկրին .
Աղօթեցէք՝ առ Հայր վերին .
տալ ինձ շնորհս՝ իւր երկնային :

2

Ձեզ նուիրեմ՝ պտուղ սիրոյ ,
զոտանաւոր՝ զայս բան երգոյ .
Տո՛ւք ինձ և դուք՝ ինչ փոխարէն ,
յղեալ ինչ նոր՝ գործած հիւսկէն :

3

Մի՛ մոռանայք՝ զբան Փրկչին ,
լինել Պատանդ՝ մեր ծնողին .
Զ՚ի լուիջիք՝ դուք զերանին ,
յահեղ աւուր՝ դատաստանին :

4

Այս է պտուղ՝ իմ առաջին ,
և դուք պարտիք՝ ներել թերին .
Տացէ ինձ Տէր՝ շնո՛րհս կրկին ,
լինել մանուկ՝ զգօն ուշիմ :

## Բան ԷՌ ՚ի վերայ Մեծատանց :

1

Պարտ է ձեզ խորհիլ՝ չլինիլ հպարտ ,
այլ լինիլ խոնարհ՝ և բարեացապարտ ․
Զի խոնարհութիւն՝ է պատուէր Փրկչին,
իսկ հպարտութիւն՝ է սատանային :

2

Ապա պարտ է մեզ՝ հետևել Փրկչին ,
և ունկն դնել՝ սուրբ բանից Նորին ․
Եւ ոչ հետևիլ՝ չար սատանային ,
որ է թշնամի՝ մարդկային ազգին :

3

Ունկն դիք բանից՝ արարչին մերոյ ,
զորս ազդ առնեմ ձեզ՝ ես բանիւ սիրոյ ․
Տէր մեր ցուցանէ՝ իւր աշակերտաց ,
զամբարշտութիւն՝ հպարտ մեծատանց :

4

Դիւրին է մալխոյ՝ յասեղն անցանել,
քան թէ փարթամաց՝ զերկինս ժառանգել․
Վասն որոյ լերուք՝ դուք հեզ և հլու ,
զի արժանասջիք՝ սիրոյն Աստուծոյ :

### Բան ԷՃ ՚ի վերայ Տապաղ Տանջանց :

1

Ո՛վ մատաղ մանկունք՝ ազգիս Հայկազեանց,
ունկն դիք բանից՝ խրատուց բարեաց ․
Եւ դրոշմեցէք՝ ՚ի սիրտ ձեր զայն ,
զի բարի անուամբ՝ լինիք պատուական :

2

Պարարէ զոսկերս՝ խրատ իմաստնոյն ,
և առնէ զձեզ՝ քաջ և բարեմոյն ․
Ապա միշտ լերուք՝ առաքինասէր ,
փափագողք բարւոյն՝ և ուսումնասէր :

3

Զի եթէ չարին՝ տայցէք դուք տեղի ,
մարմնով և հոգւով՝ լինիք եղկելի ․
Վասն որոյ փութով՝ փախիք ՚ի չարէն,
և երկերուք միշտ՝ յահեղ արարչէն :

4

Բարի ընկերաց՝ լերուք դուք կցորդ ,
և բարեաց գործոց՝ լերուք բաժանորդ․
Զի ՚ի վախճանի՝ լինիք դուք բարի ,
յաստիս և յանտիս՝ յար երանելի :

## ԱՌԵՂԾՈՒԱԾ:

1

Զչորս եղբարս՝ մայր մեր ծնաւ,
որոց ուրոյն՝ անուն եդաւ.
Երկուքն ՚ի մէնջ՝ են երիցունք,
և այլ երկուք՝ ասին փոքունք:

2

Զմեր հասակ՝ գիտե՞լ կամիս,
Թէ գիտիցես՝ յոյժ զարմասցիս.
Ամ մի միայն՝ է երիցանց,
եօթանասուն՝ ամ կրտսերաց:

Այս առեղծուած նշանակէ զչորս կողմանս աշխարհի. այսինքն՝ Արևելք, Արևմուտք, Հիւսիս, Հարաւ:

Զի սկզբնատառ առաջնոց երկուցն է Ա. որ է 1. և սկզբնատառ վերջնոց երկուցն է Հ. որ է 70:

## Բան երգ ՚ի վերայ ազգի մերոյ :

1

Երկպառակ ազգ՝ մեր Հայկազանց ,
չունէին դադար՝ յայս ձոր վշտաց .
գերի վարեալ՝ ՚ի թշնամեաց ,
և տարագիր՝ ՚ի հայրենեաց :

2

Աստուած ՚ի մեզ՝ ողորմեցաւ ,
և փրկութեան՝ մեր ցանկացաւ .
՚ի ձեռն Ռուսաց՝ զմեզ փրկեաց ,
յորոգայթից՝ անօրինաց :

3

Ազգ մեր բնաւ՝ չե՛ն միաբան ,
այլ նախանձու՝ զիրեարս ատեան .
Իւ ՚ի շնորհաց՝ Տեառն հեռանան ,
վասն մեղացն՝ յոլովութեան :

4

Զբան փրկչին՝ ՚ի բաց լքեալ ,
յիմարաբար՝ զչարըն սիրեալ .
Ուստի և տէր՝ մեր՝ բարկացեալ .
զմեզ իսպառ՝ յաչաց հանեալ :

## Բան երգ ՚ի մէջ Հայկեան Մարդասիրական Ճեմարանին :

1

Ո՛վ դու Ճեմարան՝ ազգիս Հայկազեան,
որ ես պտղատու՝ ամենայն մարդկան.
Հայկազուն մանկունք՝ եկեսցեն առ քեզ,
և գտեալ զուսումն՝ լիցին քաջ և հեզ:

2

Ո՛վ մայր սնոտու՝ շքեղ Ճեմարան,
կրթեա՛ դու զիմ միտս՝ ուսմամբ պիտևան.
Զի եղէց զգօն՝ ՚ի միջի մարդկան,
և ծառայեցից՝ ազգիս Հայկազեան:

3

Լուսազգեստ խորան՝ տոհմին Արամեան,
որ ՚ի քեզ ունիս՝ զլոյս յարաժամ.
Հաղորդեա՛ զլոյս՝ իմ տկար մտաց,
զի յառաջացայց՝ ՚ի գիւտ գիտութեանց:

4

Ժուժկալ և բարի՝ և երկայնամիտ,
վարժապետք ներհուն՝ և զգօնամիտ.
Դուք զբարին մեր՝ յարաժամ կամիք,
որք եմք ձեզ իբրև՝ որդիք սիրելիք:

### Բան ԺԶ 'ի վերայ Մտերիմ Բարեկամի :

1

Մտերիմ քաղցրիկ՝ հոգւոյս սիրելի՛,
դու ես ինձ իբրև՝ հլու աղաւնի.
Արդ քեզ նուիրեմ՝ պտուղ ինչ սիրոյ,
զայս ոտանաւոր՝ բան երգոյ իմոյ :

2

Սէր մտերմութեան՝ է գոհար անգին,
զոր պարտիս ունիլ՝ 'ի մէջ քոյ սրտին.
Տէրն մեր Յիսուս՝ զսէր քարոզեաց,
իւր աշակերտաց՝ սիրել պատուիրեաց :

3

Ո՛վ դու մտերիմ՝ բարեկամ քաղցրիկ,
ընկա՛լ դու սիրով՝ զայս նուէր փոքրիկ.
Իբրև զնշան՝ բարեկամութեան,
որ լիցի իբրև՝ վէմ ինչ անսասան :

4

Սովաւ դու լիցիս՝ յերկրի գովելի,
'ի միջի մարդկան՝ անուամբ պանծալի.
Լիցիս և յերկինս՝ դու երանելի,
արժանի եղեալ՝ վերին խորանի :

Բան ԽԶ. 'ի վերայ սրբոյն Յովհաննու ամլորդւոյ :

1

Յովհաննէս եղև՝ կարապետ փրկչին ,
խստամբեր կենօք՝ կեայր յանապատին:

2

Որ և բարբառէր՝ զբան փրկութեան ,
զբան երկնային՝ սուրբ արքայութեան:

3

Վահան եղև սա՝ բարեպաշտութեան ,
աշտարակ ընդդէմ՝ չարին բռնութեան :

4

Հայեսցուք յայս սիւն՝ սուրբ Եկեղեցւոյ ,
յայս պայծառ լապտեր՝ մեր սբ̃ Հաւատոյ :

5

Ամլորդի ասի՝ և անուն նորին ,
զի էր սա ամլոյ՝ միամօր որդին :

6

Նմանիլ սմա՝ պա՛րտ է մեզ յաւէտ ,
բարի ընթացիւք՝ գործովք պտղաւէտ :

7

ՙՆանի՛ր է մարդոյ՝ ճոխութիւն համայն ,
առանց Հաւատոյ՝ առանց փրկութեան:

8

Ի՛ն Աստուած տացէ՝ մեզ շնորհս կրկին ,
զի բերցուք յանձինս՝ տիպ տիրականին :

9

Սատանայ 'ի մէնջ՝ փախիցէ հեռի ,
Թէ հետևեսցուք՝ միշտ մերում Փրկչի :

Րան էջ 'ի վերայ աշնուան Մօրաքերց իմոյ :

1

Մօրաքո՛յրք իմ՝ յոյժ սիրելիք,
բերեմ առ ձեզ՝ նուէր փոքրիկ.
Իոտին որդիս՝ ձեզ կարօտեալ,
տեսութեան ձեր՝ յոյժ փափաքեալ:

2

Ցար անսասան՝ լերո՛ւք 'ի Տէր,
զի եմք մեք աստ՝ ուսումնասէր.
Ընհո՛գ լերուք՝ դուք վասն մեր,
զի քաջ գործոց՝ եմք պտղաբեր:

3

Մօրաքո՛յրք մեր՝ յոյժ կաթոգին,
որք բնակիք՝ 'ի տար երկրին.
Աղօթեցէք՝ առ Տէր վերին,
տալ մեզ շնորհս՝ հոգեկանին:

4

Ես հանապազ՝ 'ի Տէր յուսամ,
յարատևել՝ 'ի գիտութեան.
Տացէ ինձ Տէր՝ շնորհս կրկին,
լինել մանուկ՝ զգօն աշխոյժ:

Բան եւս ՚ի վերայ Ծնաւորաց :

1

Ծնաւո՛րք պարկեշտք՝ ժառանգորդք երկնից,
փափագեալ յաւէտ՝ փառաց անմահից.
Օգնեցէ՛ք դուք մեզ՝ աղօթիւք ձերով,
զի միշտ ՚ի չարեաց՝ լիցուք ապահով:

2

Աղօթք ձեր են մեզ՝ ամրակուռ վահան,
պահեալ յաշխարհի՝ զմեզ անսասան.
Եւ մի՛ կարասցուք՝ մեք անփորձ մնալ,
անբաժ յաղօթից՝ ձեր շնորհածաւալ:

3

Աղօթք ձեր առ Տէր՝ ուղի՛ղ եղիցին,
որպէս խունկ անոյշ՝ ըստ բանի Դաւթին.
Եւ ձեռաց ձերոց՝ ամբարձումն ՚ի վեր,
հաճոյ պատարագ՝ լիցի վասն մեր:

4

՚Ի սէր ձեր Աստուած՝ ՚ի մեզ խնայէ,
՚ի սէր ձեր Յիսուս՝ ձայնից մեր լսէ.
Ո՛վ ընտիր անօթք՝ սիրելիք Փրկչին,
յիշեցէ՛ք զմեզ՝ յաղօթս ձերոյին:

Բան էմ 'ի վերայ Սուրբ Եկեղեցւոյն Հայաստանեայց :

1

Եկեղեցի՛ սուրբ՝ Քրիստոնէական,
Նազարէթ անուն՝ տեղի փրկութեան.
Եկա՛յք Հայկազունք՝ յայս տուն տնադրեալ,
և առաջի Տեառն՝ անկցո՛ւք զղջացեալ:

2

Գլուխ ընդհանուր՝ սուրբ Եկեղեցւոյ,
է փրկիչն Յիսուս՝ որդին Աստուծոյ.
Որ փրկեաց զմեզ՝ 'ի ձեռաց չարին,
արդեամբք իւր յաղթօղ՝ կենսատու խաչին:

3

Օրհնեա՛ Տէր զքոյ՝ սուրբ զԵկեղեցի,
և արա՛ զմեզ՝ սիրոյդ արժանի.
Զի սուրբ հաւատով՝ և բարի գործովք,
յամենայն չարեաց՝ լիցուք ապահովք:

4

Ցօղեա՛ 'ի մեզ Տէր՝ զցօղ քոյ վերին,
զի նորաւ հոգիք՝ մեր զուարթասցին.
Եւ 'ի հասանել՝ մերոյ օրհասին,
մի՛ լիցուք աղքատ՝ 'ի բարեաց մասին:

5

Այլ երբ զիմաստուն՝ կուսանս կոչեսցին,
ընդ առաջ ելցուք փեսային հարսին.
ունելով զառատ՝ իւղ 'ի լապտերին,
զիւղ բարեաց գործոց՝ զիւղ բարեպաշտին:

### Բան ԻՄ 'ի վերայ Վաճառականաց :

1

'Ի մատեանս համայն՝ նախնեաց պատմութե՟ ,
ազգ Փիւնիկեցւոց՝ ասին պատուական .
Զի էին սոքա՝ քաջ վաճառական ,
և կիրթ յարուեստի՝ նաւավարութեան :

2

Որոց և ապա՝ այլք հետևեցան ,
'ի գործ առ և տրոյ՝ եղեալ փութաջան .
Որով պետութիւնք՝ ծաղկեալ ճոխացան ,
որով գիւտք , արհեստք՝ յաւէտ ծաղկեցան :

3

Ուր գոյ առ և տուր՝ անդ և ճոխութիւն ,
ուր չի՛ք առ և տուր՝ անդ աղքատութիւն .
Սովաւ արքայից՝ գահք են հաստատուն ,
սովաւ քաղաքաց՝ լինի շինութիւն :

4

Երկու ինչ պէտք են՝ վաճառականաց ,
լինել միշտ արդար՝ և ջրջահայեաց .
Որով դասեցին՝ 'ի թիւս փարթամաց ,
և մեծարեցին՝ յամենայն ազգաց :

Բան էջ ՚ի վերայ Հայկական Վարժարանին Էմոյ :

1

Վարժապետ բարի՝ և հայր կարեկից,
կոչեցաւ յայդ պաշտօն՝ ՚ի Տեառնէ երկնից.
Դու ընուս զիմ միտ՝ շնորհօք իմաստից,
տաս և զօգտաւէտ՝ ճաշակ արհեստից:

2

Աղէքսանդր ունէր՝ իւր զԱրիստոտէլ,
զոր գեր քան զհայր՝ սովոր էր պատուել.
Քանզի հայր իւր էր՝ լոկ ծնող մարմնոյ,
իսկ Արիստոտէլ՝ էր հայր ըստ հոգւոյ:

3

Ապա իմ պատուեալ՝ զվերին պատուէր,
զանձն իմ տալ հաճիմ՝ բոլորանուէր.
Եւ ՚ի ճանաչել՝ զքոյ զերախտիս,
նոյն և կատարել՝ զիմ խորին պարտիս:

4

Ընկալ դու ուրեմն՝ վարժապետ ազնիւ,
զայս քերթած հակիրճ՝ քեզ առ ՚ի պատիւ.
Զոր քեզ նուիրէ՝ որդիդ հոգեկան,
՚ի ցոյց իւր սիրոյ՝ և խոնարհութեան:

Բան երգ ՚ի վերայ Անգղիական Վարժապետաց երգոց :

1

Վարժապետք բարիք՝ ուսուցիչք բարեաց,
սանձարկուք դաժան՝ անոպայ մանկանց·
Դուք զմիտս մեր՝ լնուք յարաժամ,
հոգեշահ խրատուք՝ բանիւք պիտեան:

2

Ծնօղք որդեսէրք՝ հաղորդիչք բարեաց,
անարգուք մոլեաց՝ տիպք առաքինեաց·
Ձեօք ուսաք սիրել՝ զառաքինութիւն,
Ձեօք ուսաք ատել՝ զգարշ մոլութիւն:

3

Ապա պարտիմք մեք՝ զձեզ միշտ սիրել,
և գեր քան զմեր՝ իսկ ծնօղս պատուել·
Զի նոքա ետուն՝ մեզ զկեանս մարմնոյ,
իսկ դուք հաղորդէք՝ մեզ զկեանս հոգւոյ:

4

Ո՛վ պարգեւատուդ՝ ամենայն բարեաց,
տուր համբերութիւն՝ մեր վարժապետաց·
՚Ի տալ մեզ խրատ՝ հոգեշահ ուսմանց,
զի գտցուք ապա՝ զպսակ փառաց:

Նոյն եղն. 'ի վերայ Խնամակալաց իմոց :

1

Գթած հոգաբարձուք՝ մեր պանդխտութեան,
որ փայլէք գործովք՝ աստուածսիրութեան.
Դուք էք պանդխտացս՝ հօր և մօր փոխան,
զի լնուք զպէտս՝ մեր կարօտութեան :

2

Խնամք ձեր են մեզ՝ ցօղք առաւօտեան,
որք տան տերևոց՝ կեանս դալարութեան.
Ո՛վ հայր մեր բարի՝ և մայր պատուական,
ցուցէք մեզ յաւերժ՝ սէր ծնողական :

3

Ո՛չ մոռասցուք մեք՝ զձեր երախտիս,
այլ զերախտագէտ՝ ցուցցուք զպարտիս.
Եթէ մոռասցուք՝ զձեզ ծնօղք մեր,
փոխարէն զմեզ՝ մոռասցի աջ մեր :

4

Լեզուք մեր բնաւ՝ չկարեն լռել,
զսէր և զգութ՝ ձեր առ մեզ պատմել.
Թէ մեք լռիցեմք՝ ըստ Տեառն բանի,
քարինք Գոչեսցեն՝ ձայն աղաղակի :

Բան ինչ 'ի վերայ Երկրի ծննդեան իմոյ :

Ո՛վ իմ քաղցրիկ՝ վայր ծննդեան,
ուր նախ տեսի՝ լոյս տունջեան.
Քեզ ընծայի՝ յարգ մայրական,
զի ես դու ինձ՝ մայր պատուական:

Երկիր առատ՝ և շահեկան,
ուր հանք ազնիւք՝ գան յերևան.
Յակինթ, զմրուխտ՝ և անդամանդ,
ոսկի, արծաթ՝ գոն յաճախ անդ:

Երկիր յուռթի՝ և մեծագանձ,
ոյր բնակիչք՝ են ճոխապանծ.
Եւ Լիւդացւոց՝ Կրեսոս արքայն,
չէր քան զքեզ՝ յաւէտ փարթամ:

Ռանդո՛ւն քաղաք՝ ճոխ արգաւանդ,
դու ձգես յար՝ իբր խանդումանդ.
Զօտարականս՝ յայլ աշխարհաց,
'ի խոյզ և 'ի գիւտ՝ քոց ճոխութեանց:

Յորոց սակի՝ եղև հայր իմ,
որ լիք եթող՝ զիւր հայրենին.
Զոր հիւրեցեր՝ 'ի քում ծոցին,
և գիրկս արկեր՝ սիրով նմին:

Գանձք քո լեցին՝ միշտ անսպառ,
պետք քո լեցին՝ գերապայծառ.
Ընդ որ ունի՝ բերկրիլ հայր իմ,
բերկրեսցի և՝ որդի նորին:

ՎԵՐՋԱՆ :